ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հոկտեմբերի 2023թ. թիվ 580-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ Հ.ՇԻՐԱԶԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023թ. օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարքի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունից գույք հետ վերցնելու, «Գուգարքի Հ.Շիրազի անվան ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու, «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարքի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Գուգարքի Հ.Շիրազի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացման ձևով վերակազմակերպելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 10-ի թիվ 575-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1419-Ն որոշումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Կանոնադրության 3-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Դպրոցը հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարքի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային

կազմակերպության (պետական գրանցման համարը 62.210.00323) իրավահաջորդը»:

2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարքի Հ.Շիրազի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատարին՝

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարքի Հ.Շիրազի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության փոփոխությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սահմանված կարգով պետական գրանցում իրականացնելու նպատակով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

23/10/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 23
ք.Վանաձոր

Կազմված է 23.10.2023թ. և բաղկացած է
2 թերթից
Տպագրված է 3 օրինակից
Օրինակ ___
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզպետի
2023 թվականի հոկտեմբերի 23-ի
թիվ 580-Ա որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի
կողմից 22.01.2003թ.
Գրանցման թիվ 62.210.00322
ՀՎՀՀ 06909688
22.09.2017թ. գրանցված կանոնադրության թիվ 03.03
փոփոխությունը գրանցվել է ՀՀ արդարադատության
նախարարության իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
_____2023թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ Հ. ՇԻՐԱԶԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(Փոփոխություն)

2023թ.

Կանոնադրության 3-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Դպրոցը հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարքի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 62.210.00323) իրավահաջորդը»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 22.09.2017թ. գրանցված (գրանցման համար՝ 62.210.00322) «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարքի Հ.Շիրազի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը: